



Աշոտ Ալիխանյանն իր աշխատանքային կենսագրությունը սկսել է դեռևս 7-րդ դասարանի ամառային արձակուրդներից, որպես շինարար բանվոր: 1977թ. ավարտելով ԵրՊԻ-ի էներգետիկայի ֆակուլտետը՝ ստացել է ինժեներ-էլեկտրիկի մասնագիտություն: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում սովորելիս 5 անգամ մասնակցել է ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին Ղազախստանում, իսկ 1976թ. ներկայացրել է մեր հանրապետությունը Գազարին քաղաքի համամիութենական հարվածային կառույցում, որպես «Արմենիա-76» ինտերնացիոնալ ջոկատի հրամանատար:

Դեռևս ուսանողական տարիներին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով շինարարական աշխատանքներին ակտիվ մասնակցության համար 1976թ. պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

Ինստիտուտն ավարտելուց հետո Աշոտ Ալիխանյանը ծառայել է բանակում, որպես սպա, ապա աշխատել է իր մասնագիտությամբ՝ հասնելով մինչև «Լուսին» արտադրական միավորման գլխավոր ինժեների պաշտոնին:

1985թ. Աշոտ Ալիխանյանը նշանակվել է ժամանակակից կառավարման սարքավորումների և ռոբոտատեխնիկայի նորաստեղծ հ.94 պրոֆտեխնոստումնարանի տնօրեն:

Նրա անձնական նախաձեռնությամբ ՀՀ կառավարության որոշմամբ 1990թ. ստեղծվեց առաջին և մինչև օրս միակ գիտակրթական հաստատությունը՝ որպես շնորհալի երեխաների բացահայտման և նրանց համապատասխան կրթության կազմակերպման հաստատություն, որն զբաղվում է շնորհալիության խնդիրներով և որի տնօրենն է առ այսօր:

Աշոտ Ալիխանյանի ղեկավարության, նրա մանկավարժական ու կազմակերպչական կարողությունների ներդրման շնորհիվ ճեմարանում ստեղծվել է ինքնատիպ ուսումնադաստիարակչական գործունեություն, ստեղծվել են նոր և հետաքրքիր ավանդույթներ, որոնք դարձել են ճեմարանական կյանքի անբաժանելի մասը, մշակվել են դաստիարակչական գործունեության այնպիսի դրվածքներ, որոնք ապահովում են սանի ներդաշնակ և հարուստ ներաշխարհի ձևավորում:

Աշոտ Ալիխանյանը «Դպրոցականների օլիմպիական շարժում» հասարակական կազմակերպության հիմնադիրներից է և 1997թ.-ին եղել է այդ շարժման կենտրոնի նախագահը:

Աշոտ Ալիխանյանը 1997թ. մրցույթով ընտրվել է հանրապետության դպրոցների տնօրենների վերապատրաստման դասընթացների դասախոս:

Նրա կազմակերպչական կարողությունները առավելագույնս դրսևորվեցին 1997թ. Հայաստանում կազմակերպված քիմիայի միջազգային Սենդելեյան 31-

րդ օլիմպիադայի օրերին, որտեղ նա հանդես էր գալիս որպես օլիմպիադայի կազմակերպիչի նախագահի տեղակալ: Այդ օլիմպիադան կազմակերպչական առումով մոսկովյան գլխավոր պատասխանատուների կողմից գնահատվեց որպես մինչ այդ կազմակերպված բոլոր նախորդ օլիմպիադաներից լավագույնը: Աշոտ Ալիխանյանը 31-րդ միջազգային օլիմպիադայի նախօրեին հրատարակված «Մենդելեևը և Կովկասը» գրքի համահեղինակ է:

Շիրակացու ճեմարանը համարվում է հանրապետության ամենահուսալի հանրակրթական հաստատություններից մեկը, որի շրջանավարտները հասարակության մեջ առանձնանում են իրենց վառ անհատականությամբ, մասնագիտական պատրաստվածությամբ և բազմակողմանի զարգացածությամբ:

18-ամյա գործունեության ընթացքում ճեմարանը հասել է զգալի հաջողությունների և դարձել Յունեսկոյի միջազգային բակալավրիատի կարգավիճակի միակ հավակնորդը հանրապետությունում:

Աշոտ Ալիխանյանը 2000թ. պարգևատրվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալով: Նույն թվին նրան շնորհվել է Երևանի «Նոր Նորք համայնքի պատվավոր անդամ» կոչումը:

2000թ. նոյեմբերին Աշոտ Ալիխանյանը որպես ծրագրի տնօրեն մասնակցել է Սորոսի հիմնադրամի շրջանակներում հայտարարված դրամաշնորհի մրցույթին՝ «Առաջին քայլեր ինտերնետով» թեմայով և ճանաչվել է հաղթող:

2000թ. մայիսին նույն հիմնադրամի սահմանած մեկ այլ դրամաշնորհ է հաղթել «Ինտերնետային ռեսուրսների կիրառումը կրթական համակարգում» թեմայով, որպես ծրագրի տնօրեն:

Աշոտ Ալիխանյանը 2002թ. մարտին ՀՀ հեղինակային իրավունքների ազգային գործակալությունում գրանցված՝ շնորհալի երեխաների կրթության կազմակերպման և օժտվածության խնդիրների հետազոտման ծրագրի համար ստացել է հեղինակային իրավունք (N 7/20 04 մարտի 2002թ. ):

2002թ. ապրիլին Աշոտ Ալիխանյանի համահեղինակությամբ «Ինտերնետը որպես կրթական համակարգի ռեսուրս» վերնագրով հոդված է տպագրվել միջազգային հայտնի «Information technologie management » ամսագրում:

Աշոտ Ալիխանյանը ACCELS-ի (Միջազգային կրթական ամերիկյան խորհուրդներ) ծրագրի շրջանակներում մասնակցել է միջնակարգ դպրոցների տնօրենների համար նախատեսված «Համագործակցությունը կրթության ասպարեզում» մրցույթին և դարձել 4 հաղթող տնօրեններից մեկը, որոնք մեկնեցին ԱՄՆ՝ մասնակցելու նախատեսված սեմինարներին:

2003թ. հոկտեմբերին Աշոտ Ալիխանյանը ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է կառավարական պարգևով՝ Մովսես Խորենացու մեդալով :